

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) հայտարարում է ներքին մրցույթ՝ Կոմիտեի տնային տնտեսությունների վիճակագրության բաժնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 64-25.13-Մ5-1) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար**

Վիճակագրական կոմիտեի տնային տնտեսությունների վիճակագրության բաժնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 64-25.13-Մ5-1) պաշտոնի բնութագրի, պաշտոնն զբաղեցնող քաղաքացիական ծառայողի համար սահմանված գործառույթների, իրավունքների, պարտականությունների, պաշտոնին ներկայացվող պահանջների՝ պաշտոնի համար պահանջվող կրթության, աշխատանքային ստաժի, աշխատանքի բնագավառում փորձի, մասնագիտական գիտելիքների, կոմպետենցիաների, ինչպես նաև պաշտոնի կազմակերպական լիազորությունների և ղեկավարման շրջանակների մասին տեղեկատվությունը ներառված է պաշտոնի անձնագրում, որի **էլեկտրոնային օրինակը կցվում է:**

Մրցույթին մասնակցելու համար դիմումները ներկայացվում են առցանց՝ <https://cso.gov.am/internal-external-competitions> հղումով՝ **2021 թվականի մարտի 22-ից 2021 թվականի մարտի 26-ը** ներառյալ, քսանչորսժամյա ռեժիմով, կցելով անհրաժեշտ փաստաթղթերի լուսապատճեններն ու լուսանկարը:

1. Դիմում
2. անձնագիր և/կամ նույնականացման քարտի լուսապատճենը.
3. դիպլոմ(ներ)ի լուսապատճեն(ներ)ը.
4. աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթ(եր)ի լուսապատճեն(ներ)ը.
5. արական սեռի անձինք՝ զինվորական գրքույկի լուսապատճենը.
6. մեկ լուսանկար՝3x4 չափսի.

*Ծանոթանալով Թեստավորման մասին հրապարակված հայտարարության բովանդակությանը՝ քաղաքացին կարող է հայտարարության տեքստի վերջում նշված «Դիմել» ստեղծի օգնությամբ ներկայացնել էլեկտրոնային դիմում:*

*Սեղմելով «Դիմել» ստեղծը՝ բացվում է «Մուտք» պատուհանը, որտեղ անհրաժեշտ է լրացնել վավեր էլեկտրոնային փոստի հասցե, գաղտնաբառ և սեղմել «Գրանցվել» կոճակը, եթե առաջին անգամ է դիմում ներկայացվում վերոնշյալ կայքէջի միջոցով, իսկ եթե արդեն գրանցված է, անհրաժեշտ է սեղմել «Մուտք» կոճակը: Հաջորդ քայլով անհրաժեշտ է բացված պատուհանի վերևի աջ անկյունում՝ «Իմ էջը» բաժնում («Ծանուցումներ» զանգակ նշանի տեսքով է) բաժնի կողքը), լրացնել անձնական տվյալները և «Կրթություն», Օտար լեզուներ» Համակարգչային ծրագրեր» բաժինները, պարտադիր լրացման ենթակա բոլոր դաշտերը, կցել հայտարարության մեջ նշված անհրաժեշտ փաստաթղթերի լուսապատճենները, լուսանկարը և սեղմել «Պահպանել» կոճակը:*

Մրցույթին մասնակցելու համար դիմումները ներկայացվում են քսանչորսամյա ռեժիմով:

Լրացնելով «Իմ էջի» անձնական տվյալները, կցելով անհրաժեշտ փաստաթղթերը՝ անհրաժեշտ է արդեն իսկ գրանցված օգտատիրոջ էջում՝ «Մրցույթներ» բաժնում Հայաստանի Հանրապետության Վիճակագրական կոմիտեի տնային տնտեսությունների վիճակագրության բաժնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 64-25.13-Մ5-1) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող թեստավորման մասին հրապարակված հայտարարությունը և «Գործողություններ» ենթաբաժնի ներքո նշված «Դիմել» կոճակով ներկայացնել դիմումը, որից անմիջապես հետո քաղաքացին ստանում է ծանուցում դիմումն ընդունվելու մասին: Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հնարավոր է փաստաթղթերը հետ վերադարձվեն քաղաքացուն՝ խմբագրման համար: Նման դեպքում քաղաքացին պարտավոր է ծանուցումն ուղարկելուց հետո՝ 2(երկու) աշխատանքային օրվա ընթացքում կրկին դիմել՝ վերացնելով փաստաթղթերի թերություններն ու ուղղելով սխալները, որոնց մասին քաղաքացին ծանուցվում է «Իմ էջի» «Ծանուցումներ» բաժնի և էլեկտրոնային փոստի միջոցով: Փաստաթղթերի թերությունների և սխալների մասին մեկնաբանությունը քաղաքացին կարող է տեսնել՝ բացելով «Իմ էջի» «Մրցույթներ» բաժնի համապատասխան հայտարարության հերթական համարից առաջ դրված «⊕» նշանը: Համակարգում գրանցվելուց հետո քաղաքացին իր «Անձնական էջ» կարող է մուտք գործել՝ այցելելով <https://hartak.cso.gov.am/> հղումի «ԱՆՁՆԱԿԱՆ ԷՋ» բաժնի, որտեղ անհրաժեշտ է լրացնել գրանցված էլեկտրոնային փոստի հասցեն և գաղտնաբառը:

Մրցույթի թեստավորման փուլը կանցկացվի **2021 թվականի մայիսի 7-ին՝ ժամը 11.00-ին**, Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Տերյան 89):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի **2021 թվականի մայիսի 11-ին՝ ժամը 11.00-ին**, Վիճակագրական կոմիտեի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կառավարական 3-րդ շենք, 628 սենյակ):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի «Հարցարան» ձևաչափով: Հիմնական աշխատավարձը՝ 129 634 (մեկ հարյուր քսանինը հազար վեց հարյուր երեսունչորս) ՀՀ դրամ է:

**Աշխատավայրը՝** ք.Երևան, Կառավարական շենք 3:

Նշված պաշտոնին հավակնող անձը պետք է լինի բարեկիրթ, պարտաճանաչ, հավասարակշռված, գործնական, ունենա նախաձեռնողականություն և պատասխանատվության զգացում:

Թեստում ընդգրկվող մասնագիտական գիտելիքների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են հետևյալ բնագավառներից՝

- ՀՀ Սահմանադրություն, հոդվածներ՝ 7, 34, 89, 93, 118, 124, 163, 176, 179, Հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=102510>
- «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդվածներ՝ 6, 9, 19, 22, 23, 28, 34, Հղումը՝ <https://arlis.am/DocumentView.aspx?DOCID=120807>
- «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդվածներ՝ 2, 3, 5, 7, 10, 21, 30, 38, Հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=132720>
- «Պաշտոնական վիճակագրության մասին» ՀՀ օրենք, հոդվածներ՝ 4, 5, 6, 14, 17, 21, 27, 28, 19.1, 19.2, 19.3 Հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120755>
- «Հայաստանի վիճակագրական տարեգիրք», կենսամակարդակ բաժին Հղումը՝ <https://armstat.am/am/?nid=586&year=2020>
- «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» զեկույց, գլուխ 2,3,5) Հղումը՝ [https://www.armstat.am/file/article/poverty\\_2018-arm.pdf](https://www.armstat.am/file/article/poverty_2018-arm.pdf)
- «ՀՀ բնակչության եկամուտներն ու ծախսերը և սննդամթերքի սպառումը 1999, 2001 և 2002թթ.» վիճակագրական ժողովածու, 2004 Հղումը՝ <https://www.armstat.am/am/?nid=81&pthid=pov&year=&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC>
- «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» զեկույց, (մեթոդաբանական պարզաբանումներ) Հղումը [https://armstat.am/file/article/poverty\\_2019\\_a\\_00.pdf](https://armstat.am/file/article/poverty_2019_a_00.pdf)
- Ինֆորմատիկա 7-րդ դասարան; Դասագիրք հանրակրթական դպրոցի համար: Ս.Ս.Ավետիսյան, Ա.Վ.Դանիելյան: Մասնագիտական խմբագիր՝ Ռ.Վ.Ազգաշյան: Երևան 2012թ. Հղումը՝ <http://online.fliphtml5.com/fumf/egdx>

- <<Գրավոր խոսք>>, Վազգեն Գաբրիելյան, Երրորդ լրամշակված հրատարակչություն, Լիմուշ հրատարակչություն, Երևան 2012թ., էջեր՝ 70-74, 98-99  
 Հղումը՝ <https://parliament.am/Library/book/gravor-khosq.pdf>:

Թեստում ընդգրկվող կոմպետենցիաների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են տվյալ պաշտոնի համար սահմանված և Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական ինտերնետային կայքէջում հրապարակված ընդհանրական կոմպետենցիաներից, մասնավորապես՝

- <<Խնդրի լուծում>>

Հղումը՝ [https://www.gov.am/u\\_files/file/Haytararutyunner/4.pdf](https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/4.pdf)

- «<<Հաշվետվությունների մշակում>> կոմպետենցիա

Հղումը՝ [https://www.gov.am/u\\_files/file/Haytararutyunner/6.pdf](https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/6.pdf)

- <<Բարեվարքություն>>

Հղումը՝ [https://www.gov.am/u\\_files/file/Haytararutyunner/3.pdf](https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/3.pdf)

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները մրցույթի վերաբերյալ հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել Վիճակագրական կոմիտեի անձնակազմի կառավարման բաժին (հասցե՝ ք.Երևան, Կառավարական տուն 3, հեռախոսահամար՝ 011/52-44-97, էլեկտրոնային փոստի հասցե՝ [staffdivision@armstat.am](mailto:staffdivision@armstat.am)):

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ**

**ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՏՆԱՅԻՆ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏ**

<b>1.Ընդհանուր դրույթներ</b>
<p><b>1.1.Պաշտոնի անվանումը,ծածկագիրը</b> Վիճակագրական կոմիտեի(այսուհետ՝ Կոմիտե)տնային տնտեսությունների վիճակագրության բաժնի(այսուհետ՝ Բաժին)ավագ մասնագետ(ծածկագիր՝64-25.13-Մ5-1)</p> <p><b>1.2.Ենթակա և հաշվետու է՝</b> Բաժնի ավագ մասնագետն ամիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:</p> <p><b>1.3.Փոխարինող պաշտոնիկամպաշտոններիանվանումները՝</b> Բաժնի ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի մյուս ավագ մասնագետը կամ Բաժնի մասնագետներից մեկը.</p> <p><b>1.4.Աշխատավայրը՝</b> Հայաստան, ք.Երևան,Կենտրոն վարչական շրջան, Հանրապետության պողոտա,Կառավարական շենք 3:</p>
<b>2.Պաշտոնի բնութագիրը</b>
<p><b>2.1.Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները.</b></p> <ol style="list-style-type: none"><li>1. Մասնակցում է տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության (այսուհետ՝ ՏՏԿԱՀ) արդյունքների բազայում՝ SPSS ծրագրային փաթեթով մուտքագրված տվյալների տրամաբանական ստուգման աշխատանքներին.</li><li>2. Վերստուգում և շտկումներ է կատարում յուրաքանչյուր եռամսյակի համար տպագրվող ՏՏԿԱՀ օրագրում և իրականացնում դրա տպագրման կազմակերպման և ըստ մարզերի բաշխման աշխատանքները.</li><li>3. Մասնակցում է ՏՏԿԱՀ տվյալների բազայում (օրագրում և հարցաթերթում) տեղ գտած սխալների ուղղման աշխատանքներին՝ տարեկան կտրվածքով.</li><li>4. Մասնակցում է «Կայուն զարգացման նպատակներ» (ԿՁՆ) ծրագրի ցուցանիշների ստուգաճշտման, տեղադրման աշխատանքներին.</li><li>5. Մասնակցում է «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական զեկույցի պատրաստման աշխատանքներին.</li></ol>

6. Մասնակցում է «Պարենային ապահովությունը և աղքատությունը» վիճակագրական տեղեկագրի «Պարենի մատչելիությունը» բաժնի աղյուսակների պատրաստման աշխատանքներին.
7. Լրացնում է «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով» վիճակագրական ժողովածուի «Տնային տնտեսությունների հետազոտություն» բաժնի աղյուսակները և տրամադրում համապատասխան ստորաբաժանմանը.
8. Լրացնում և ճշգրտում է «Հայաստանի վիճակագրական տարեգիրք» վիճակագրական ժողովածուի «Տնային տնտեսությունների եկամուտները, ծախսերը, սպառումը և աղքատության ցուցանիշները» բաժնի աղյուսակները և տրամադրում համապատասխան ստորաբաժանմանը,
9. Մասնակցում է ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեին տրամադրվող դրամական եկամուտների և սպառողական ծախսերի վերաբերյալ աղյուսակների պատրաստման աշխատանքներին.
10. Մասնակցում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից հայցվող դրամական եկամուտների և սպառողական ծախսերի վերաբերյալ աղյուսակների պատրաստման աշխատանքներին.
11. Նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ.

### **Իրավունքները՝**

- ՏՏԿԱՀ օրագրի լրացման ընթացքում առաջացած հարցերի շուրջ պարզաբանումներ և ճշտումներ կատարել.
- Վիճակագրական վերլուծական տեղեկագրերի պատրաստման աշխատանքների հետ կապված ճշտումներ կատարել Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների հետ.
- Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումներից սահմանված կարգով պահանջել և ստանալ Բաժնի աշխատանքների համար անհրաժեշտ տեղեկատվություն.
- Առաջարկություններ ներկայացնել ՏՏԿԱՀ տվյալների բազայում (օրագրում և հարցաթերթում) տեղ գտած սխալների ուղղման վերաբերյալ.

### **Պարտականությունները՝**

- Կատարել SSԿԱՀ արդյունքների բազայում՝ SPSS ծրագրային փաթեթով մուտքագրված տվյալների տրամաբանական ստուգման աշխատանքներ.
- Մշտադիտարկել SSԿԱՀ տվյալների բազայում (օրագրում և հարցաթերթում) տեղ գտած սխալների ուղղման աշխատանքները՝ տարեկան կտրվածքով.
- Կատարել «Կայուն զարգացման նպատակներ» (ԿԶՆ) ծրագրի ցուցանիշների ստուգաճշտման, տեղադրման աշխատանքներ,
- Կատարել վիճակագրական զեկույցների, տեղեկագրերի պատրաստման աշխատանքներ.
- Պատրաստել համապատասխան վիճակագրական ժողովածուների SSԿԱՀ աղյուսակները և տրամադրել համապատասխան ստորաբաժանմանը.
- Խմբագրել Բաժնի գործառույթներին առնչվող Կոմիտեի վիճակագրություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների կողմից տրամադրվող նյութերը.
- Պատրաստել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից հայցվող դրամական եկամուտների և սպառողական ծախսերի վերաբերյալ աղյուսակներ.
- Ապահովել վիճակագրական գաղտիքի պահպանումը:

### **3. Պաշտոնին ներկայացվող պահանջները՝**

#### **3.1. Կրթություն, որակավորման աստիճանը.**

1	Ուղղություն	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2	Ոլորտ	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՔԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
3	Ենթաօլորտ	Տնտեսագիտություն
4	Մասնագիտություն	Տնտեսագիտություն

#### **3.2. Մասնագիտական գիտելիքները՝**

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ.

#### **3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը՝**

Հանրային ծառայության առնվազն 1 տարվա ստաժ կամ 1 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության բնագավառում, կամ մաթեմատիկայի բնագավառում՝ վիճակագրի 1 տարվա աշխատանքային ստաժ:

#### **3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ**

##### **Ընդհանրական կոմպետենցիաներ՝**

1. Խնդրի լուծում
2. Հաշվետվությունների մշակում
3. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն

4.Բարեվարքություն:

**Ընդրանքային կոմպերենցիաներ՝**

1. Փոփոխությունների կառավարում
2. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
3. Ժամանակիկառավարում
4. Փաստաթղթերի նախապատրաստում:

**4.Կազմակերպական շրջանակը**

**4.1.Աշխատանքիկազմակերպման և ղեկավարմանպատասխանատվությունը.**

**Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և միջանկյալ արդյունքի ստեղծման և մասնագիտական օժանդակության համար:**

**4.2.Որոշումներկայացնելուլիազորությունները.**

**Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և միջանկյալ արդյունքի ստեղծման և մասնագիտական օժանդակության շրջանակներում:**

**4.3.Գործունեությանազդեցությունը.**

**Ունի ազդեցություն կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին աջակցության, որոշակի մասնագիտական գործառույթների իրականացմանն օժանդակության շրջանակներում:**

**4.4.Շփումները և ներկայացուցչությունը.**

**Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի կառուցվածքային այլ ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև այլ համապատասխան մարմինների ներկայացուցիչների հետ ընդգրկվում է տվյալ մարմնի ներսում ձևավորված մասնագիտական աշխատանքային խմբերում:**

**4.5.Խնդիրներիբարդությունը և դրանցլուծումը.**

**Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրների լուծման մասով տալիս է մասնագիտական առաջարկություն:**